ՍՈՒՐԲԾՆՆԴՅԱՆ ՈՒՂԵՐՁ

Մոսկվայի և համայն Ռուսիո ԿԻՐԻԼ Պատրիարքի
Ռուս Ուղղափառ Եկեղեցու հովվապետներին, հովիվներին,
սարկավագներին, վանականներին և հավատավոր բոլոր զավակներին

Սիրելի՛ ի Տեր հովվապետներ,
արժանապատիվ երեցներ և սարկավագներ, աստվածասեր վանականներ և միանձնուհիներ, թանկագի՛ն եղբայրներ և քույրեր,

Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ մեր Տեր Աստծո և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյան լուսապայծառ տոնի առթիվ և ձեզ եմ ուղղում հին եկեղեցական շարականի խոսքերը. «*Քրիստոսը ծնվում է՝ փառավորեցե՛ք. Քրիստոսը երկնքից է՝ դիմավորեցե՛ք. Քրիստոսը երկրի վրա է՝ բարձրացե՛ք*» (Եռմոս Ա. երգի Սբ. Ծննդյան կանոնի)։

Պողոս առաքյալն Աստծո մարմնավորման կատարված իրադարձությունն անվանել է «*բարեպաշտության մեծ խորհուրդ*» (Ա Տիմոթ. 3:16)։ Այս խորհրդի առջև ահուդողով լռում է ցանկացած երկրային մտածողություն։ Նրա առջև խամրում է մարդկային ունայն գիտելիքը։ Այն ունակ է զինաթափելու և մեղմացնելու ամենակոպիտ և քարացած սիրտը։ Այս դաժան և չարացած աշխարհի մեջ է ծնվում Մեկը, Ով Միայն կարող է բուժել ցանկացած բաժանվածություն, պարգևել մեզ իսկական խաղաղություն և իրական երջանկություն։

Այն պահից, երբ մեղքը մուտք գործեց մարդկային կյանք, երկրի վրա թագավորեց ողբերգական բաժանումը, և աշխարհը, կտրված Արարչից՝ լույսի իսկական Աղբյուրից, անխուսափելիորեն սկսեց ընկղմվել խավարի և քաոսի մեջ։ Սակայն Աստված չլքեց Իր արարչությունը և անխնամ չթողեց այն։ Համբերությամբ նախապատրաստելով մեր փրկությունը, Տերը մարմնացավ, մուտք գործեց երկրային պատմություն և դարձավ մեզնից մեկը։ Աստծո Որդին դարձավ Մարդու Որդի՝ ամեն ինչում նման մեզ, բացի մեղքից։ «Ո՞ւր ես դու, Ադամ» վշտալից հարցը, որը երբեմն հնչել էր Եդեմի դրախտային պարտեզում, վերջապես գտավ իր պատասխանը Բեթղեհեմի մոտ գտնվող աղքատիկ քարանձավում։ «*Առաջին մարդը երկրից էր, հողեղեն. երկրորդ մարդը՝ Տերը՝ երկնքից*» (Ա Կորնթ. 15:47), ինչպես գրել է Պողոս առաքյալը։ Քրիստոսի մեջ, որպես՝ նոր Ադամի, *Աստված հաշտեցրեց աշխարհն Իր հետ* (Բ Կորնթ. 5:19), նորոգեց մարդկային բնությունը՝ բուժելով այն մեղքի վերքերից։

Մարդու կյանքը և ամբողջ աշխարհի կյանքը բուժվում են միայն Աստծո մեջ. ահա այն պարզ, բայց շատ կարևոր ճշմարտությունը, որի մասին վկայում է այս տոնը։ Ինչպե՞ս այստեղ չհիշել երանելի Օգոստինոսի ոգեշնչված խոսքերը, որը սուրբ երկյուղով փառաբանել է Ամենակալի իմաստուն Նախախնամությունը. «*Դու մեզ ստեղծեցիր Քեզ համար, և մեր սիրտը հանգիստ չի գտնում, մինչև չհանգստանա Քո մեջ*» (Խոստովանություն)։ Միայն Հիսուս Քրիստոսի մեջ է գտնվում միությունն Աստծո հետ և աշխարհի արարչագործությունից ի վեր հավիտենության կոչված մարդու կյանքի իսկական իմաստը։

Փրկչի աշխարհ գալը, նախ և առաջ մարդկանց հանդեպ Աստվածային սիրո հայտնությունն է. սիրո, որը մի կողմից անսահման է և ամենահաղթ, իսկ մյուս կողմից՝ հեզ, որը *ամեն բան ծածկում է, ամեն բանի հավատում, ամեն բանի հանդեպ հույս ունի և ամեն բանի համբերում է* (Ա Կորնթ. 13:7)։

Իսկ ինչպե՞ս մենք արժանի կերպով պատասխանենք մեր Արարչի մեծ սիրուն և մոտենանք Նրան։ Այս մտերմությանը մենք հասնում և հաստատում ենք ավետարանական պատվիրաններին հետևելու, համբերության և միմյանց հանդեպ անկեղծ սիրո, և գլխավորապես՝ Սուրբ Հաղորդության Խորհրդով Քրիստոսի հետ մեր միության մշտական նորոգության միջոցով։

Այսօր հույսի տոնն է։ Խաղաղության տոնն է։ Խաղաղ ուրախության տոնն է։ Փառաբանելով Ծնված Փրկչին և դիմավորելով Նրան գեղեցիկ երգեցողություններով և եկեղեցական շարականներով՝ հիշենք քրիստոնեական բարձր կոչումը՝ *լինելու աշխարհի լույսը և երկրի աղը* (Մատթ. 5:13–14) և, *քանի դեռ ժամանակ կա, բարին գործենք բոլորի հանդեպ, մանավանդ հավատի մեջ մեր հարազատների* (Գաղ. 6:10)։

Նվիրենք հույս վշտացածներին, մխիթարեն տրտմածներին, կիսենք ուրախությունը մեր մերձավորների և հեռավորների հետ, և օգնենք կարիքավորներին. այդպես վարվելով՝ մենք իսկապես կդառնանք *Քրիստոսի բուրմունքն Աստծո առաջ* (Բ Կորնթ. 2:15) և հաճելի ընծաներ կբերենք Ծնված Տիրոջը։

Իսկ նրանց, ովքեր տարբեր հանգամանքների պատճառով դեռ Եկեղեցու փրկարար ցանկապատից դուրս են գտնվում և չեն մասնակցում Քրիստոսի համայնքի կյանքին, դիմում եմ կոչով. բացե՛ք ձեր սիրտը Նրա առաջ, *Ով այնքան սիրեց մեզ, որ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի յուրաքանչյուր ոք, ով հավատում է Նրան, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա* (Հովհ. 3:16)։

Ուրեմն փառաբանենք Տիրոջը և Փրկչին մարդկային ցեղի հանդեպ Նրա անասելի ողորմության և սիրո համար։

Շնորհավորելով բոլորիդ Սբ. Ծննդյան տոնի առթիվ՝ մաղթում եմ ձեզ, իմ սիրելինե՛ր, ուժերի ամրություն և անսպառ ուրախություն Ծնված Փրկչով։ *Շնո՛րհ և խաղաղությու՛ն ձեզ մեր Հայր Աստծուց և Տեր Հիսուս Քրիստոսից* (Եփես. 1:2)։ Ամեն։

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

Սուրբ Ծնունդ

2025/2026 թթ.

ք. Մոսկվա